ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2019թ. թիվ 638-Ա

«ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետի «դ» պարբերության պահանջների՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (փոխատու կողմ) Վանաձոր քաղաքի Բանակի փողոցի N 8 հասցեում տեղակայված՝ 259.92 քառ. մետր մակերեսով դիահերձարանից շուրջ 132 քառ. մետր մակերեսով տարածքն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ Լոռու մարզային դատաբժշկական փորձաքննությունների բաժնի գործունեությունը կազմակերպելու նպատակով: Դիահերձարանի մնացած՝ շուրջ 127.92 քառ. մետր մակերեսով տարածքում ծավալել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պաթոլոգիաանատոմիական ծառայությունը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ